

**Մասնագիտության որակավորում` ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐ**  
Ուսուցման ընդհանուր տևողություն /4 տարի. 240 կրեդիտ/

**Ծրագիրն ավարտելով շրջանավարտը գիտելիքներ կունենա հետևյալ ոլորտներում.**

- հողերի հաշվառման,
- անշարժ գույքի չափագրման և գնահատման,
- հողաշինարարության,
- ջրօգտագործման կազմակերպման,
- ջրային ռեսուրսների կառավարման, օգտագործման կազմակերպման, հիդրոմելիորատիվ համակարգերի, հիդրոտեխնիկական կառուցվածքների նախագծման, կառուցման և շահագործման:

**Ուսանողները պրակտիկ կարողություններ են ձեռք բերում աշխատանքային կիսամյակի ընթացքում`**

- անշարժ գույքի կադաստրի ստորաբաժանումներում և մասնաճյուղերում,
- ջրային տնտեսության կոմիտեի ստորաբաժանումներում,
- պոմպային կայաններում,
- ջրամատակարարման համակարգերում,
- ջրամբարային հիդրոհանգույցներում,
- ֆերմերային տնտեսություններում,
- ոլորտի պետական և մասնավոր կազմակերպություններում:

Աշխատանքային կիսամյակի ընթացքում ուսանողները աշխատավարձ են ստանում:

**Մասնագիտությունն ունի կարևոր առաքելություն` ավարտած մասնագետները.**

- կնախագծեն ջրամբարային հիդրոհանգույց, ոռոգման համակարգ,
- կկազմեն հողաշինարարական սխեմաներ, միջտնտեսային և ներտնտեսային հողաշինարարական նախագծեր,
- կկիրառեն ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ և գեոդեզիական գործիքներ` ճարտարագիտական նախագծերը բնության մեջ տեղափոխելու համար,
- կվերլուծեն ջրային և հողային պաշարների կառավարման, պահպանման և օգտագործման համալիր ծրագրեր,
- կիրականացնեն հողային և ջրային պաշարների օգտագործման կանխատեսման, ճարտարագիտական նախագծերի մշակման և անշարժ գույքի կադաստրի վարման գործընթացներ,
- կկազմեն ագրարային ճարտարագիտական նախագծերի նախագծա-նախահաշվային փաստաթղթերը,
- կիրականացնեն հողային և ջրային պաշարների մոնիթորինգ արդի թվային տեխնոլոգիաների կիրառմամբ,
- կիրականացնեն խորհրդատվություն ջրատնտեսական և հողաշինարարական համակարգերի, հիդրոտեխնիկական կառուցվածքների նախագծման, բնապահպանության ոլորտում նորմատիվ, տեխնիկական, իրավական փաստաթղթերի բովանդակության վերաբերյալ,
- կկատարեն ջրատնտեսական և հողաշինարարական ծրագրերի փորձաքննություն և գնահատում,

<b>Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն</b> <b>071804.02.6</b>						Հարցերի դեպքում կարող եք. Այցելել մեզ՝ Երևան, Տերյան 74 Ձանգահարել՝ (+374) 52 45 41 Գրել մեզ՝ <a href="mailto:info@anau.am">info@anau.am</a> Website՝ <a href="https://anau.am/">https://anau.am/</a> Միացեք մեզ Facebook-ում՝ <a href="https://www.facebook.com/anauofficial/">https://www.facebook.com/anauofficial/</a>	
<b>1-ին տարի</b>		<b>2-րդ տարի</b>		<b>3-րդ տարի</b>		<b>4-րդ տարի</b>	
<b>1-ին կիսամյակ</b>		<b>3-րդ կիսամյակ</b>		<b>5-րդ կիսամյակ</b>		<b>7-րդ կիսամյակ</b>	
Հայոց լեզու	Հայոց պատմություն	Տեսական մեխանիկա	Նյութերի դիմադրություն	Աշխարհագրական տեղեկատվական համակարգեր	Հիդրոտեխնիկական կառուցվածքներ	Աշխատանքային կիսամյակ	
2 կրեդիտ	2 կրեդիտ	5 կրեդիտ	6 կրեդիտ	6 կրեդիտ	6 կրեդիտ		
Օտար լեզու (ռուսերեն)	Բարձրագույն մաթեմատիկա – 1	Համակարգչային գրաֆիկա	Ճարտարագիտական գեոդեզիա	Մելիորացիա և հողերի վերականգնում	Հիդրոլոգիա և հոսքի կանոնավորում		
4 կրեդիտ	5 կրեդիտ	6 կրեդիտ	6 կրեդիտ	7 կրեդիտ	4 կրեդիտ		
Կիրառական ինֆորմատիկա	Գրաֆիկայի հիմունքներ	Գյուղատնտեսության էկոնոմիկա	Տեխնիկական վիճակագրություն	Հողաշինարարություն	Կամընտրային առարկա		
5 կրեդիտ	5 կրեդիտ	4 կրեդիտ	4 կրեդիտ	6 կրեդիտ	4 կրեդիտ		
Ֆիզիկա							
6 կրեդիտ						30 կրեդիտ	
<b>2-րդ կիսամյակ</b>		<b>4-րդ կիսամյակ</b>		<b>6-րդ կիսամյակ</b>		<b>8-րդ կիսամյակ</b>	
Հայոց լեզու և խոսքի մշակույթ	Նյութագիտություն և շիննյութեր	Հիդրավլիկա	Ձեռնարկատիրություն	Գյուղատնտեսական ջրամատակարարում և ջրարբիացում	Ջրատնտեսական համակարգերի շահագործում	Հողային և ջրային իրավունք	Կենսանվտանգություն և քաղաքաշտպանություն
2 կրեդիտ	5 կրեդիտ	6 կրեդիտ	4 կրեդիտ	4 կրեդիտ	5 կրեդիտ	3 կրեդիտ	4 կրեդիտ
Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն)	Հասարակագիտական առարկաների մոդուլներ	Էլեկտրատեխնիկա, վերականգնվող էներգիա և ավտոմատացում	Ճարտարագիտական երկրաբանություն	Հողային և ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարում	Պոմպեր և ա/կ	Հողաշինարարական և մելիորատիվ աշխատանքների կազմակերպում և տեխնոլոգիա	Հողային կադաստրի վարում և մոնիտորինգ
8 կրեդիտ	6 կրեդիտ	5 կրեդիտ	4 կրեդիտ	4 կրեդիտ	5 կրեդիտ	5 կրեդիտ	5 կրեդիտ
Բարձրագույն մաթեմատիկա – 2	Ընդհանուր քիմիա	Ճարտարագիտական բնապահպանություն	Գյուղատնտեսության հիմունքներ	Անշարժ գույքի կադաստր	Կամընտրային առարկա	Կամընտրային առարկա	
6 կրեդիտ	4 կրեդիտ	4 կրեդիտ	5 կրեդիտ	6 կրեդիտ	4 կրեդիտ	3 կրեդիտ	
Ավարտական աշխատանքի պաշտպանություն							
10 կրեդիտ							